



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

03rd November 2019

Bulletin 44/2019

### Eighth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՅԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-14

Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Օրհնեալ լ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով՝ երկնային վայրերու մէջ, ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, որպէսզի գովաբանենք իր շնորհքին փառքը. անով ընդունելի դարձուց մեզ Սիրելիին միջոցով: Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. անով ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Քրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անոր՝ որ կը ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, որպէսզի մենք՝ նախապէս Քրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: Դ՞ուք ալ ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Հոգիով, որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար:

### The Epistle of St Paul to the Ephesians 1:1-14

Paul, an apostle of Christ Jesus by the will of God,

To God's holy people in Ephesus, <sup>a</sup> the faithful in Christ Jesus:

Grace and peace to you from God our Father and the Lord Jesus Christ.

### Praise for Spiritual Blessings in Christ

Praise be to the God and Father of our Lord Jesus Christ, who has blessed us in the heavenly realms with every spiritual blessing in Christ. For he chose us in him before the creation of the world to be holy and blameless in his sight. In love he <sup>b</sup> predestined us for adoption to sonship <sup>c</sup> through Jesus Christ, in accordance with his pleasure and will—to the praise of his glorious grace, which he has freely given us in the One he loves. In him we have

### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

redemption through his blood, the forgiveness of sins, in accordance with the riches of God's grace that he lavished on us. With all wisdom and understanding, he <sup>d</sup> made known to us the mystery of his will according to his good pleasure, which he purposed in Christ, to be put into effect when the times reach their fulfillment—to bring unity to all things in heaven and on earth under Christ.

In him we were also chosen, <sup>e</sup> having been predestined according to the plan of him who works out everything in conformity with the purpose of his will, in order that we, who were the first to put our hope in Christ, might be for the praise of his glory. And you also were included in Christ when you heard the message of truth, the gospel of your salvation. When you believed, you were marked in him with a seal, the promised Holy Spirit, who is a deposit guaranteeing our inheritance until the redemption of those who are God's possession—to the praise of his glory.

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:17-21

Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չգիտցուի ու երեւան չելլէ: Ուրեմն զգուշացէ՛ք թէ ի՛նչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի առնուի նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»:

Անոր մայրն ու եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար մօտենալ իրեն: Անոր լուր տուին՝ ըսելով. «Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայնած են եւ կուզեն տեսնել քեզ»: Ան ալ պատասխանեց անոնց. «Իմ մայրս ու եղբայրներս անո՛նք են, որ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

### The Holy Gospel of Jesus Christ according to Luke 8:17-21

For there is nothing hidden that will not be disclosed, and nothing concealed that will not be known or brought out into the open. Therefore consider carefully how you listen. Whoever has will be given more; whoever does not have, even what they think they have will be taken from them."

#### Jesus' Mother and Brothers

Now Jesus' mother and brothers came to see him, but they were not able to get near him because of the crowd. Someone told him, "Your mother and brothers are standing outside, wanting to see you."

He replied, "My mother and brothers are those who hear God's word and put it into practice."

### Տոն բոլոր սրբերի՝ հների և նորերի, հայտնիների և անհայտների

Շայ Եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ Եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության արբազան մատյանում:

Քրիստոնեական հալածանքների և հավատի համար մղված բազում պատերազմների ժամանակ շատերն են նահատակվել, որոնց անունները, ցավոք, չեն պահպանվել և հասել մեզ: Ուստի, Եկեղեցին հաստատել է այս նվիրական տոնը հենց նրանց հիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արյունը հեղեցին հանուն Քրիստոսի և նրա խորհրդավոր մարմնի՝ Եկեղեցու շինության:

### Feast of All Saints - the old and the new, the known and the unknown

By this feast the Armenian Apostolic Church commemorates the memory of all those saints, whose names are not included in the Church Calendar, but whose names are registered in the sacred book of the Heavenly Kingdom.

Many people have been subjected to severe torments and have been martyred during the wars for the sake of faith. Unfortunately, we do not know their names. So the Church has established this feast in the Church Calendar in order to commemorate their memory. They are persons who shed their blood for the sake of Christ and His Church.

### 3: This weeks message from our Priest in Charge

## Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից:

ՀԱԻԱՏՈՎ, ԹԷ՞ ԳՈՐԾՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

**«Իմ մայրը եւ եղբայրները սրանք ենք, որ Աստու խօսքը լսում են եւ կատարում»** (Ղուկ. 8:21):

Աստու խօսքով Զրիստոսին հարազատացած սիրելիներ,

Սուրբ Գիրք ընթերցող եւ Աստու խօսքով ապրելու ձգտող ամէն մարդ ունի պարբերաբար աղօթական խոկումի եւ Աստուածաշնչի խօսքերի մասին խորհրդածելու հոգեւոր փորձառութիւնը: Որքան որ համատեղեցեալան, նոյնքան եւ անձնական փրկութեան ծրագիր ու հրաւեր է Աստուծոյ մեզ եկած Բարի Լուրը՝ մեր Տէր Յիսուս Զրիստոսի Սուրբ Աւետարանը: Յաճախ են մարդիկ իրենց զգացած հոգեւոր փորձառութիւնը, Աստուծուն զգալու ուրախութիւնը կիսում այլոց հետ: Ոմանք էլ ուրիշներին Աստու խօսքը հասցնելու միտումով քարոզելու եւ Սուրբ Գիրքը բացատրելու առաքելութիւն են փորձում իրենց վրայ վերցնել: Ահա յատկապէս այս յանգամանքի մէջ է, որ մեծ զգուշութիւն, անելին՝ մեծ պատասխանատուութիւն է հարկաւոր, որպէսզի բարի մտքով չարիք գործած չը լինենք եւ օգուտի փոխարէն հոգուն վնաս տանք: Այս է պատճառը, որ առաքեալը չի խրախուսում, որ շատերը ուսուցանողներ լինելու ձգտեն, քանի որ մեծ դատապարտութիւն պիտի ընդունենք (*հմմտ.՝ Յակք. 3:1*): Սրա փոխարէն առաւել նախընտրելի է անձնական օրինակի վկայութիւնը, առաքիւնի կեանքը Փրկչի մասին խօսուն քարոզի վերածելը:

Երկու կարեւոր եւ իրար յաջորդող ընթացքներ են, որ մեր կեանքը լեցուն են պահում Աստու սիրով եւ կենդանի ներկայութեամբ.

ա/ Աստու խօսքը լսելը

բ/ Այդ խօսքը պահելը, այլ կերպ՝ այդ խօսքի համաձայն ապրելը

Թերեւս կարող ենք ասել, որ մոլորակի բոլոր անկիւններ հասել է Զրիստոսի Աւետարանի բարի լուրը, աշխարհի ցանկացած անկիւնից հնարաւոր է գրքով կամ անգամ մի հպումով թուային տարբերակով կարդալ եւ լսել Աստու խօսքը: **«Նա ընտրեց մեզ Զրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ անարատ լինենք նրա առաջ սիրով: Նախասահմանեց մեզ որդեգրութեան Յիսուս Զրիստոսի միջոցով, ըստ իր կամքի հաճութեան»** (Եփ. 1:4-5):

Բոլոր դարերի փորձառութիւնը մեզ յուշում է, որ առաւել դժուարը խօսքը գործ դարձնելն է, ըստ այդ խօսքի ապրելը: Զրիստոսի ժամանակակիցներից քանի՞ քանիսը տեսան Փրկչին, Բարի Լուրը լսեցին Նրանից կամ Իր աշակերտներից, բայց այդ խօսքերը կատարողները, կեանք դարձնողները վարձ ունենալու խոստում ստացան: Երբ Զրիստոսի մարմնական հարազատները մօտեցան, իրենց օրինակի վրայ Զրիստոս բացայայտ եւ յստակօրէն ազդարարեց, որ իր հարազատներ են նրանք, որոնք լսում եւ կատարում են Աստու խօսքը: Սա ասաց ոչ թէ Իր մօրը եւ միւս հարազատներին նսեմացնելու, այլ միւսներին մղելու բարձրանալու եւ միկնելու Իր մայր, եղբայր, քոյր լինելու փառաւոր կոչումին արժանանալու:

Լսել եւ կատարել: Մեր ամբողջ հոգեւոր կեանքը այս երկուսի շարունակական հարատեւ ընթացքն է՝ սկսած լսելով հաւատալուց եւ մկրտուելուց, միկնել աղօթքի եւ բարի գործերի կիրարկումով մարդկանց եւ Աստու հետ ամենօրեայ յարաբերութիւն:

Յիսուսի մարմնական հարազատները նաեւ հաւատքով հարազատ եղան՝ լսելով եւ ապրելով Աստու խօսքը: Հրեաների համար ըստ մարմնի նախահայր դիտուած Աբրահամի ոչ բոլոր հարազատները խոստման կրող եւ հետեւաբար՝ հաւատքի հարազատ կոչուեցին. **«Ոչ էլ բոլորը, որ Աբրահամի սերնդից են, որդիներ են, ... այսինքն թէ՛ մարմնի որդիները չեն, որ Աստու որդիներ են, այլ խոստման որդիներն են համարուում որպէս սերունդ»** (Հռոմ. 9:7-8): Աւետարանը մեզ է փոխանցում Աստու նոր խոստումը, երբ Աստուած նոր ուխտ եւ նոր կտակ է հաստատուում մարդկութեան հետ, ուր շեշտադրում է հէնց հոգեւոր հարազատութիւնը: Սա երեւում է Պօղոս առաքեալի դիտարկումից, երբ նախ ընդհանրապէս Յիսուսի եւ իսրայէլացիների մարմնական կապի մասին է ասում. **«Նրանցն են նահապետները, նրանցից է նաեւ Զրիստոս՝ ըստ մարմնի. եւ նա՛ է բոլորի վրայ յաւիտեանս օրինեալ Աստուած»** (Հռոմ. 9:5): Իսկ յետոյ մատուցում է հոգեւորը. **«Եւ որոնց՝ մեզ, կանչեց ոչ միայն հրեաների միջից, այլ նաեւ՝ հեթանոսների...»** (Հռոմ. 9:24): Սրանով յստակ երեւում է, որ ոչ բոլոր հրեաները (մարմնով հարազատները) արժանի եղան Աստու որդիներ կոչուելու եւ փրկութեան արժանանալու, այլ նրանք, որոնք հոգով հարազատ դարձան՝ հաւատալով Զրիստոսի խոստումին: Նոյնպէս բոլոր ազգերի միջից լսելով եւ ապրելով զատուելով եւ մկրտութեամբ Նոր Ուխտով Աստուծուն զաւականալով՝ ամէն ազգ եւ ամէն մարդ կարող է դառնալ Աստու որդի եւ խոստումի կրող, ինչպէս որ մարգարեութեան մէջ է ասում. **«Նրան, որ իմ ժողովուրդը չէր, ինձ ժողովուրդ պիտի կոչեմ եւ չսիրուածը՝ սիրեցեալ եւ այնպէս պիտի լինի, որ այն տեղում, որտեղ ասուեց նրանց, թէ՛ դուք իմ ժողովուրդը չէք, այդ նոյն տեղում նրանք կենդանի Աստու որդիներ պիտի կոչուեն»** (Հռոմ. 9:25-26):

Տիրոջ ողորմութեամբ հաստատուն մնանք այս ուխտի եւ որդեգրութեան մէջ, որպէսզի մեր սուրբ Հայրերի օրինակով կարողանանք ասել, որ այս հաւատքը մեր մաշկի գոյնն է եւ աշխարհում ոչ ոք մեզ չի կարող բաժանել Զրիստոսի սիրուց:

Մեր Տէր Յիսուս Զրիստոսի շնորհը, Աստու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

### 3: Հոգեհալոց - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Seza Serengulian-Kevorkian and Mr Saro Kevorkian and Family for the soul of their Grandmother and Great-grandmother the late **ANAHED BATMANIAN** on the 7<sup>th</sup> day memorial of her passing, also for the late **VAHRAM & ZOVINAR SERENGULIAN** and **HOVSEP TUKMEJIAN** and for all the old and new deceased members of the **SERENGULIAN, TUKMEJIAN** and **KEVORKIAN** Families.

*On behalf of the Istepanian and Khachikian families, would like to offer our condolences to Saro Kevorkian and Seza Serengulian and their families for the loss of their grandmother the late Anahed Batmanian and our prayers for her soul. God bless her soul and rest her in peace.*

By Mr and Mrs Armand and Aline Abramian and Family for the soul of their Son and Brother the late **ANDRE RAFFI ABRAMIAN**, on the 9<sup>th</sup> anniversary memorial of his passing, also for the soul of their Mother and Grandmother the late **ANAHID GARABEDIAN**, and for all the old and new deceased members of the **ABRAMIAN, GARABEDIAN** and **MARDIROSIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.